ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն Պայմանագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ի զարգացումն 1993 թվականի մարտի 12-ի՝ "Հակամենաշնորհային քաղաքականության համաձայնեցման մասին" Համաձայնագրի,

հաստատելով սույն Պայմանագրի մասնակից պետությունների շահերին տնտեսական վնաս հասցնող ցանկացած գործողություններում ձեռնպահ մնալու ձգտումը,

ընդունելով ինքնիշխանության, հավասարության, խտրականությունից հրաժարվելու սկզբունքների պահպանման անհրաժեշտությունը,

ձգտելով կանխել առեւտրի եւ տնտեսական զարգացման համար բացասական գործոնների առաջացումը, որոնք կարող են ծագել տնտեսվարող սուբյեկտների մենաշնորհային գործունեության հետեւանքով,

ընդունելով սույն Պայմանագրի մասնակից պետությունների կողմից հակամենաշնորհային օրենսդրական ակտեր ընդունելու եւ արդյունավետ հակամենաշնորհային քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը,

հաշվի առնելով անդրազգային կորպորացիաների աճող ազդեցությունը սույն Պայմանագրի մասնակից պետությունների տնտեսական զարգացման վրա,

հաշվի առնելով հակամենաշնորհային քաղաքականության աճող դերը սույն Պայմանագրի մասնակից պետությունների տնտեսական շահերի ապահովման գործում,

պայմանավորվեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Պայմանագրի նպատակների համար կիրառվում են հետեւյալ սահմանումները.

տնտեսվարող սուբյեկտներ՝ սեփականության բոլոր ձեւերի իրավաբանական անձինք, որոնք զբաղվում են ապրանքների ու ծառայությունների արտադրության, իրացման, ձեռք բերելու գործունեությամբ, ինչպես նաեւ ինքնուրույն ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձինք,

ապրանքային շուկա՝ փոխարինողներ կամ փոխադարձաբար միմյանց փոխարինող ապրանքներ չունեցող ապրանքների (արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների) շրջանառության ոլորտ սույն Պայմանագրի մասնակից պետությունների (այսուհետ՝ մասնակից պետություններ) տարածքի կամ նրանց մի մասի սահմաններում,

մրցակցություն՝ տնտեսվարող սուբյեկտների մրցում, երբ նրանց ինքնուրույն գործողությունները արդյունավետորեն սահմանափակում են նրանցից յուրաքանչյուրի հնարավորությունը՝ միակողմանիորեն ազդելու համապատասխան ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա եւ խթանում են սպառողին անհրաժեշտ ապրանքների արտադրությունը,

գերիշխող դիրք՝ ապրանքային շուկայում տնտեսվարող սուբյեկտի բացառիկ դիրք, որը նրան հնարավորություն է տալիս ինքնուրույն կամ այլ տնտեսվարող սուբյեկտների հետ համատեղ պայմաններ թելադրել սպառողներին եւ/կամ մրցակիցներին, դժվարեցնել այլ տնտեսվարող սուբյեկտների՝ դեպի շուկա ելքը կամ այլ կերպ սահմանափակել մրցակցությունը,

մենաշնորհային գործունեություն՝ տնտեսվարող սուբյեկտների, իշխանության եւ կառավարման մարմինների՝ ազգային հակամենաշնորհային օրենսդրությանը հակասող գործողություններ (անգործություն), որոնք ուղղված են մրցակցություն չթույլատրելուն, սահմանափակելուն կամ վերացնելուն եւ/կամ ոտնահարում են սպառողների օրինական շահերը,

անբարեխիղճ մրցակցություն՝ տնտեսվարող սուբյեկտների ձեռնարկատիրական գործունեության մեջ առավելություններ ձեռք բերելուն ուղղված ցանկացած գործողություն (անգործություն), որը հակասում է ազգային հակամենաշնորհային

օրենսդրությանը, գործարար շրջանառության սովորույթներին եւ կարող է վնաս պատճառել կամ պատճառել է այլ տնտեսվարող սուբյեկտներին կամ վնասել նրանց գործարար համբավը,

հակամենաշնորհային օրենսդրություն՝ մասնակից պետությունների տարածքներում գործող նորմատիվ իրավական ակտեր, որոնք պարունակում են մենաշնորհային գործունեության եւ անբարեխիղճ մրցակցության կանխմանը, սահմանափակմանը եւ խափանմանն ուղղված դրույթներ,

հակամենաշնորհային մարմին՝ մասնակից պետության մարմին, որը հսկողություն է իրականացնում հակամենաշնորհային օրենսդրության պահպանման նկատմամբ,

քննություն (ուսումնասիրություն)՝ հակամենաշնորհային օրենսդրության կիրառում դրա խախտումների մասին գործերի քննության միջոցով, ապրանքային շուկաների ուսումնասիրություն, ինչպես նաեւ մասնակից պետությունների դրա համար լիազորված իրավասու մարմինների կողմից իրականացվող այլ գործողություններ:

ՀՈԴՎԱԾ 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Սույն Պայմանագիրը նպատակ ունի ստեղծել Կողմերի՝ համաձայնեցված հակամենաշնորհային քաղաքականություն վարելուն եւ մրցակցության զարգացմանն ուղղված համագործակցության իրավական եւ կազմակերպական հիմունքները, ինչպես նաեւ վերացնել առեւտրի ու տնտեսական զարգացման համար բացասական գործոնները եւ չթույլատրել մենաշնորհային գործունեության եւ/կամ անբարեխիղճ մրցակցության հետեւանքով մասնակից պետությունների տնտեսական շահերին վնաս պատճառող գործողություններ:

2. Սույն Պայմանագրի նպատակներն են՝

մենաշնորհային գործունեության եւ/կամ անբարեխիղճ մրցակցության կանխմանը, սահմանափակմանը եւ խափանմանն ուղղված համատեղ գործողությունների համակարգում,

հակամենաշնորհային օրենսդրությունների մերձեցում այնքանով, որքանով դա անհրաժեշտ է սույն Պայմանագրի իրականացման համար,

մրցակցության զարգացման, ապրանքային շուկաների արդյունավետ գործունեության եւ սպառողների իրավունքների պաշտպանության համար պայմանների ստեղծում,

տնտեսվարող սուբյեկտների, իշխանության եւ կառավարման մարմինների մենաշնորհային գործունեության քննության ու գնահատման կարգի համաձայնեցում եւ դրա հիման վրա համագործակցության մեխանիզմի ստեղծում:

ՀՈԴՎԱԾ 3. ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Գործողությունները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակման, այլ տնտեսվարող սուբյեկտների կամ սպառողների օրինական շահերի ոտնահարման կամ հանդիսանում են անբարեխիղճ մրցակցության դրսեւորում, դիտվում են որպես անթույլատրելի եւ որակվում են մասնակից պետությունների հակամենաշնորհային օրենսդրությանը համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված գործողություններն են՝

1) գերիշխող դիրքի չարաշահումները, մասնավորապես՝

գնման կամ վաճառքի գների կամ գործարքի այլ անարդար պայմանների պարտադրում (պահպանում) մենաշնորհային բարձր շահույթ ստանալու կամ մրցակիցներին վերացնելու համար,

ի վնաս սպառողների՝ արտադրության կամ իրացման սահմանափակում՝ գների չհիմնավորված բարձրացման, համապատասխան շուկայում պակասորդի ստեղծման կամ պահպանման նպատակով,

տնտեսվարող գործընկերների նկատմամբ հավասար պայմանների դեպքում ոչ միանման մոտեցման կիրառում, որը նրանց համար ստեղծում է մրցակցության անհավասար պայմաններ,

այլ տնտեսվարող սուբյեկտների՝ դեպի շուկա մուտքի արգելքների ստեղծում.

2) տնտեսվարող սուբյեկտների միջեւ հակամրցակցային համաձայնագրեր եւ

համաձայնեցված գործողությունների այլ ձեւեր, որոնք կարող են սահմանափակել մրցակցության ազատությունը ապրանքային շուկաներում կամ նրանց համապատասխան մասերում՝ հետեւյալների միջոցով՝

ապրանքային շուկայի բաժանում՝ ըստ տարածքային սկզբունքի, վաճառքի կամ գնումների ծավալի, տեսականու կամ սպառողների շրջանակի,

համապատասխան ապրանքային շուկա որպես վաճառող կամ գնորդ այլ տնտեսվարող սուբյեկտների մուտքի սահմանափակում,

գնման կամ վաճառքի գների կամ գործարքի այլ պայմանների սահմանում,

արտադրության, իրացման, տեխնիկական զարգացման, ներդրումային գործընթացների նկատմամբ հսկողություն,

տնտեսվարող գործընկերներին սույն Պայմանագրի առարկային չառնչվող եւ նրանց շահերը ոտնահարող լրացուցիչ պայմանների պարտադրում,

հավասար պայմանների դեպքում տնտեսվարող գործընկերների նկատմամբ ոչ միանման մոտեցում, որը համապատասխան ապրանքային շուկայում անբարենպաստ պայմաններ է ստեղծում մրցակցության համար,

3) անբարեխիղճ մրցակցություն, մասնավորապես՝

կեղծ, ոչ ստույգ կամ աղավաղված տեղեկությունների տարածում, որոնք կարող են վնաս պատճառել այլ տնտեսվարող սուբյեկտին կամ վնասել նրա գործարար համբավը,

ապրանքի պատրաստման բնույթի, եղանակի եւ տեղի, սպառողական հատկությունների, որակի առումով սպառողներին մոլորեցնելը,

տնտեսվարող սուբյեկտի կողմից իր գովազդային գործունեության ընթացքում իր կողմից արտադրվող կամ իրացվող ապրանքի ոչ ճիշտ համեմատությունը այլ տնտեսվարող սուբյեկտների ապրանքների հետ, ապրանքային նշանի, ֆիրմային անվանման կամ ապրանքի նշագրման ինքնակամ օգտագործումը, ինչպես նաեւ այլ տնտեսվարող սուբյեկտի ապրանքի ձեւի, փաթեթավորման, արտաքին ձեւավորման նմանակումը,

գիտատեխնիկական, արտադրական կամ առեւտրային տեղեկության, այդ թվում՝ առեւտրային գաղտնիքի ստացումը, օգտագործումը, հրապարակումը՝ առանց դրա սեփականատիրոջ համաձայնության:

3. Մրցակցությունը սահմանափակող գործողությունների կամ համաձայնագրերի գնահատման դեպքում հաշվի է առնվում տեխնիկական կամ տնտեսական առաջընթացին, ապրանքային շուկաների հարստացմանը, ապրանքների սպառողական հատկությունների բարելավմանը, դրանց մրցունակության բարձրացմանը այդ գործողությունների կամ համաձայնագրերի նպաստելու փաստը:

4. Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերում նշված մրցակցության սկզբունքներին համապատասխան մասնակից պետությունների փոխգործողության ընթացակարգը սահմանվում է "Մենաշնորհային գործունեության եւ անբարեխիղճ մրցակցության կանխմանն ուղղված՝ պետությունների փոխգործակցության մասին" կարգով (հավելված 1), որը հանդիսանում է սույն Պայմանագրի անքակտելի մասը:

ՀՈԴՎԱԾ 4. ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1. Սույն Պայմանագրի իրականացման համար Կողմերը հիմնում են Հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհուրդ (այսուհետ՝ Հակամենաշնորհային խորհուրդ):

2. Հակամենաշնորհային խորհրդի հիմնական խնդիրն է մենաշնորհային գործունեության, անբարեխիղճ մրցակցության գնահատման չափանիշների ու եղանակների, մրցակցության կանոնների խախտման գործերով քննության ընթացակարգերի մշակումը, ինչպես նաեւ ապրանքային շուկայում մրցակցության կանոնները խախտող տնտեսվարող սուբյեկտների, իշխանության ու կառավարման մարմինների նկատմամբ ներգործության կանոնների ու մեխանիզմների մշակումն ու դրանց համաձայնեցումը Կողմերի միջեւ:

Հակամենաշնորհային խորհրդի գործունեության ապահովման համար ստեղծվում է քարտուղարություն, որը գործում է մշտական հիմունքներով:

3. Հակամենաշնորհային խորհրդի կարգավիճակը եւ նրա խնդիրները սահմանվում են

"Հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի մասին" կարգով (հավելված 2), որը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կողմերը միջոցներ են ձեռնարկում՝ ուղղված սույն Պայմանագրից բխող պարտավորությունների կատարմանը:
2. Կողմերը պարտավորվում են աջակցել Հակամենաշնորհային խորհրդին նրա խնդիրների իրականացման գործում:

ՀՈԴՎԱԾ 6. ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Կողմերը, հաշվի առնելով ազգային օրենսդրության պահանջները, փոխանակում են տեղեկություն՝
ապրանքային շուկաների վիճակի, տնտեսության կառուցվածքային վերակառուցման շրջանակներում ապամենաշնորհման գործնական արդյունքների ու մոտեցումների, մենաշնորհային գործունեության կանխման, սահմանափակման եւ խափանման ու մրցակցության զարգացման մեթոդների եւ աշխատանքի փորձի մասին,
մասնակից պետությունների ապրանքային շուկաներ արտադրանքի առաքում իրականացնող մենաշնորհ ձեռնարկությունների ազգային գրանցամատյաններում պարունակվող տեղեկությունների մասին,
հակամենաշնորհային օրենսդրության խախտումների մասին գործերի քննության պրակտիկայի մասին:
2. Կողմերը համագործակցում են հակամենաշնորհային քաղաքականության ազգային՝ օրենքների ու նորմատիվ փաստաթղթերի մշակման հարցում տեղեկության տրամադրման եւ մեթոդական օգնության ցուցաբերման ճանապարհով:

ՀՈԴՎԱԾ 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, իսկ այն պետությունների համար, որոնց օրենսդրությունը պահանջում է պայմանագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարում՝ նշված ընթացակարգերի կատարման մասին ծանուցագրերն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:
Սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել 1993 թվականի դեկտեմբերի 23-ի "Համաձայնեցված հակամենաշնորհային քաղաքականություն վարելու մասին" Պայմանագիրը եւ 1999 թվականի հունիսի 4-ի՝ նրա գործողության ժամկետը երկարաձգելու մասին արձանագրությունը:
2. Սույն Պայմանագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով եւ ինքնաբերաբար կերկարաձգվի, յուրաքանչյուր անգամ՝ հինգ տարի ժամանակով, եթե Կողմերն այլ որոշում չեն ընդունում:
3. Սույն Պայմանագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով:
4. Կողմերի ընդհանուր համաձայնությամբ սույն Պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ որոնք ձեւակերպվում են սույն Պայմանագրի անքակտելի մասը կազմող առանձին արձանագրություններով:
5. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դուրս գալ սույն Պայմանագրից՝ իր մտադրության մասին տեղեկացնելով մյուս Կողմերին դուրս գալուց առնվազն երեք ամիս առաջ:
6. Սույն Պայմանագիրը բաց է Պայմանագրի նպատակներն ու սկզբունքները կիսող եւ Պայմանագրի պարտավորությունները ստանձնելու պատրաստ այլ պետությունների միանալու համար:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2000 թվականի հունվարի 25-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն Պայմանագիրը ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հավելված 1
2000 թ. հունվարի 25-ի
"Համաձայնեցված
հակամենաշնորհային
քաղաքականություն վարելու
մասին" Պայմանագրին կից

ԿԱՐԳ

ՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ՝ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1.1. Սույն Կարգը սահմանում է մրցակցության սկզբունքների կիրառման ուղղությամբ փոխգործակցության ընթացակարգը եւ վերաբերում է մասնակից պետությունների տնտեսվարող սուբյեկտների այն գործողություններին, որոնք կապված են նրանց կողմից գերիշխող դիրքի չարաշահման, միավորումների, համաձայնագրերի (համաձայնեցված գործողությունների), անբարեխիղճ մրցակցության հետ, ինչպես նաեւ մրցակցությունը սահմանափակող այլ գործողություններին (անգործությանը), եթե՝

այդ գործողություններին մասնակցում են ապրանքային շուկաներում իրենց ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնող երկու կամ ավելի տնտեսվարող սուբյեկտներ,

այդ գործողությունները կատարվում են մասնակից պետություններից մեկի ապրանքային շուկաներում իրենց ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնող մեկ կամ ավելի տնտեսվարող սուբյեկտների կողմից եւ հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության (անբարեխիղճ մրցակցության) սահմանափակմանը մյուս մասնակից պետությունների կամ նրանցից մեկի ապրանքային շուկաներում կամ այլ տնտեսվարող սուբյեկտների կամ սպառողների օրինական շահերի ոտնահարմանը:

1.2. Սույն Կարգը չի կիրառվում այն դեպքերում, եթե տնտեսվարող սուբյեկտների, ներառյալ՝ նրանց միավորումները, համաձայնագրերը (համաձայնեցված գործողությունները), ինչպես նաեւ տնտեսվարող սուբյեկտների գերիշխող դիրքի չարաշահումները, անբարեխիղճ մրցակցությունը եւ այլ գործողությունները (անգործությունը) իրականացվում են միայն մեկ մասնակից պետության տարածքում, չեն առնչվում մասնակից պետությունների միջեւ արտահանմանը կամ ներմուծմանը եւ չեն շոշափում մյուս մասնակից պետությունների շահերը:

1.3. Սույն Կարգով նախատեսված փոխգործակցությունն իրականացվում է հակամենաշնորհային մարմինների կողմից ծանուցումների, տեղեկության մասին հարցումների, գործի ուսումնասիրման մասին դիմումների, խորհրդակցությունների ձեւով:

1.4. Մասնակից պետությունների տարածքներում սույն Կարգի իրականացումը կատարվում է ազգային օրենսդրությանը համապատասխան լիազորությունների միջգերատեսչական բաշխման հաշվառմամբ:

2. ԾԱՆՈՒՑՈՒՄ

2.1. Եթե մասնակից պետություններից մեկի իրավասու մարմինն անցկացնում է քննություն (ուսումնասիրություն), որի ընթացքում պարզվում է, որ գործի հանգամանքները շոշափում են կամ կարող են շոշափել մյուս մասնակից պետության

շահերը, նա այդ մասին ծանուցում է այդ մասնակից պետության հակամենաշնորհային մարմնին: Ծանուցմանը կցվում են ազգային հակամենաշնորհային օրենսդրության խախտման փաստերի մասին վկայող փաստաթղթեր:

2.2. Ծանուցումը պետք է կատարվի նախօրոք՝ մյուս մասնակից պետության կամ նրա հակամենաշնորհային մարմնի կարծիքի եւ հնարավոր գործողությունների հաշվառման նպատակով, բացառությամբ այն դեպքերի, երբ նախօրոք կատարված ծանուցումը կարող է վնասել գործի քննությանը:

2.3. Նախքան որեւէ միջոց կիրառելը, ծանուցում ուղարկել ցանկացող հակամենաշնորհային մարմինները պետք է լիովին համոզվեն, որ տվյալ հանգամանքներում այդ գործողությունները վնաս չեն հասցնի գործի քննությանը:

2.4. Ծանուցումը պետք է պարունակի՝

այն տնտեսվարող սուբյեկտի անվանումը, որի գործունեությունը հետազոտվում է,

գործի էության համառոտ բնութագիրը,

գործին առնչվող նորմատիվ-իրավական ակտերը,

այլ տեղեկություններ, որոնք ծանուցող հակամենաշնորհային մարմինը հնարավոր է համարում ներկայացնել:

2.5. Ծանուցում ստացած հակամենաշնորհային մարմինը քննարկում է ազգային օրենսդրությանը համապատասխան պատշաճ միջոցառումների կիրառման հնարավորությունը:

3. ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑՈՒՄ

3.1. Սույն Կարգի 1-ին կետով նախատեսված դեպքերում մի մասնակից պետության հակամենաշնորհային մարմինը իրավունք ունի մյուս մասնակից պետությունների հակամենաշնորհային մարմիններին ուղարկել տնտեսվարող սուբյեկտների ձեռնարկատիրական գործունեությանը վերաբերվող տեղեկություն տրամադրելու մասին հարցում: Մյուս մասնակից պետությունն իրավունք ունի մերժել հարցվող տեղեկության տրամադրումը, եթե նման տեղեկությունը ազգային օրենսդրությանը համապատասխան, ճանաչվում է գաղտնի:

Տեղեկության տրամադրման մասին հարցման մեջ պետք է նշվի նրա նպատակը, շարադրվեն գործի հանգամանքները եւ կցվեն անհրաժեշտ փաստաթղթերը:

3.2. Հարցվող տեղեկությունն ուղարկվում է հակամենաշնորհային մարմինների միջեւ համաձայնեցված ժամկետում, բայց ոչ ուշ, քան հարցումը ստանալու օրվանից երեք ամսվա ընթացքում:

4. ԳՈՐԾԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄ

4.1. Մի մասնակից պետության հակամենաշնորհային մարմինն իրավունք ունի մյուս մասնակից պետության հակամենաշնորհային մարմնին ուղարկել հակամենաշնորհային օրենսդրության խախտման մասին գործի ուսումնասիրման վերաբերյալ դիմում: Դիմումը տրվում է գրավոր՝ մյուս մասնակից պետության հակամենաշնորհային օրենսդրության խախտման փաստերի մասին վկայող փաստաթղթերի կցմամբ:

4.2. Հակամենաշնորհային մարմինը մյուս մասնակից պետության հակամենաշնորհային մարմնի դիմումի հիման վրա ուսումնասիրում է խախտման փաստերը եւ դրանց վերաբերյալ ընդունում է որոշումներ՝ ազգային հակամենաշնորհային օրենսդրության պահանջների համաձայն:

5. ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Հակամենաշնորհային մարմիններն ընդհարումների ծագման հնարավորությունները նվազագույնի հասցնելու եւ փոխընդունելի որոշումների ընդունման նպատակներով Պայմանագրին առնչվող հարցերով անցկացնում են խորհրդակցություններ, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ գործի

ուսումնասիրման արդյունքում կարող են շոշափվել մասնակից պետությունների շահերը:

5.2. Խորհրդակցության անցկացման համար շահագրգիռ հակամենաշնորհային մարմինը մյուս մասնակից պետության հակամենաշնորհային մարմնին ուղարկում է խորհրդակցության անցկացման մասին գրավոր հարցում, անհրաժեշտ փաստաթղթերի կցմամբ, ինչպես նաեւ դրանց անհրաժեշտության հիմնավորմամբ եւ անցկացման պայմանների որոշմամբ:

5.3. Հակամենաշնորհային մարմինները խորհրդակցություններն իրականացնում են համաձայնեցված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան հարցումը ստանալու օրվանից երեք ամսվա ընթացքում:

6. ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՈՒՂԱՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ

6.1. Հակամենաշնորհային մարմինները Հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդին են ուղարկում՝

իրենց ազգային հակամենաշնորհային օրենսդրության փոփոխության մասին ծանուցում,

Պայմանագրի իրականացման նպատակով մշակված համաձայնագրերի ու այլ փաստաթղթերի նախաձեռնված նախագծեր,

խորհրդակցությունների արդյունքների մասին կամ այլ ճանապարհով փոխընդունելի որոշումների ընդունման փաստի մասին ծանուցումներ:

7. ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

7.1. Սույն Կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ բաժինների դրույթների համաձայն՝ ստացված տեղեկությունն օգտագործվում է միայն համապատասխան հարցման, գործի ուսումնասիրման կամ խորհրդակցության նպատակներով:

7.2. Հակամենաշնորհային մարմինները, նրանց պաշտոնատար անձինք եւ այլ ծառայողները չպետք է հրապարակեն սույն Կարգի կիրառման ընթացքում իրենց ստացած տեղեկությունը:

Հավելված 2
"Համաձայնեցված
հակամենաշնորհային
քաղաքականություն վարելու
մասին" 2000 թ. հունվարի 25-ի
Պայմանագրին կից

ԿԱՐԳ

ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհուրդը (այսուհետ՝ Հակամենաշնորհային խորհուրդ) ստեղծվում է մասնակից պետությունների գործունեության համակարգման, Պայմանագրի պահպանման նկատմամբ հսկողության, մրցակցության բնագավառում ազգային օրենսդրության մերձեցման եւ մասնակից պետությունների ապրանքային շուկաներում մենաշնորհային գործունեության ու անբարեխիղճ մրցակցության կանխման, սահմանափակման եւ խափանման իրավական հիմքերի մշակման համար:

Հակամենաշնորհային խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրությամբ, "Տնտեսական միության

ստեղծման մասին" Պայմանագրով, ինչպես նաեւ Համագործակցության շրջանակներում կնքված համաձայնագրերով, ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի, Կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշումներով, սույն Կարգով եւ իր գործունեությունն իրականացնում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեի հետ փոխգործակցությամբ:

2. ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հակամենաշնորհային խորհուրդը՝

համակարգում է ապրանքային շուկայում անբարեխիղճ մրցակցության եւ մենաշնորհային գործունեության կանխման, սահմանափակման եւ խափանման իրավական հիմքերի ստեղծմանն ուղղված՝ Կողմերի համատեղ գործունեությունը,

աջակցում է Կողմերին մրցակցության հարցերով ազգային օրենսդրությունների մշակման եւ կատարելագործման գործում,

մշակում եւ Կողմերին առաջարկում է մենաշնորհային գործունեության եւ անբարեխիղճ մրցակցության կանխման, սահմանափակման եւ խափանման կոնկրետ գործողությունների իրականացման կանոններ եւ մեխանիզմներ,

աջակցում է Կողմերին հակամենաշնորհային գործունեության եւ մրցակցության ոլորտում նորմատիվ-իրավական, մեթոդական եւ այլ տեղեկության փոխանակման գործում,

իրականացնում է Պայմանագրի իրագործման հետ կապված այլ գործառույթներ:

3. ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Իր գործառույթների իրականացման համար Հակամենաշնորհային խորհուրդն իրավունք ունի՝

կազմակերպել Պայմանագրի դրույթների իրականացման հետ կապված փաստաթղթերի նախագծերի փորձաքննություն,

համապատասխան փաստաթղթերի նախագծերի պատրաստման համար ստեղծել փորձագետների խմբեր,

Հակամենաշնորհային խորհրդի կողմից պատրաստված փաստաթղթերը սահմանված կարգով ներկայացնել ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի, Կառավարությունների ղեկավարների խորհրդի եւ տնտեսական խորհրդի քննարկմանը,

Կողմերից հայցել եւ ստանալ իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ տեղեկություն,

մշակել եւ հաստատել իր աշխատանքի կանոնակարգը, ինչպես նաեւ դրանում կատարել փոփոխություններ,

իր իրավասության սահմաններում իրականացնել աշխատանքային փոխգործակցություն երրորդ երկրների հակամենաշնորհային մարմինների եւ համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ:

4. ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հակամենաշնորհային խորհուրդը ձեւավորվում է Կողմերի լիազոր ներկայացուցիչներից: Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի Հակամենաշնորհային խորհրդում նշանակել երկու լիազոր ներկայացուցիչ եւ օժտված է մեկ ձայնի իրավունքով:

Հակամենաշնորհային խորհուրդը Կողմերի լիազոր ներկայացուցիչներից ընտրում է նախագահ եւ նրա երկու տեղակալներին:

Հակամենաշնորհային խորհրդի նախագահի եւ նրա տեղակալների լիազորությունների գործողության ժամկետը 2 տարի է: Հակամենաշնորհային խորհրդի որոշմամբ ժամկետը կարող է երկարացվել կամ կրճատվել:

Նախագահը՝

ղեկավարում է Հակամենաշնորհային խորհրդի աշխատանքը՝ ուղղված

Համագործակցության շրջանակներում կնքված համաձայնագրերից, պետությունների ղեկավարների խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշումներից, ինչպես նաեւ սույն Կարգից բխող խնդիրների կատարմանը,

անհրաժեշտության դեպքում իրեն տրված լիազորությունների սահմաններում ներկայացնում է Հակամենաշնորհային խորհուրդը ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի, Կառավարության ղեկավարների խորհրդի, տնտեսական խորհրդի եւ գործադիր կոմիտեի, ինչպես նաեւ Համագործակցության այլ կանոնադրական մարմինների նիստերում,

վարում է Հակամենաշնորհային խորհրդի նիստերը,

Հակամենաշնորհային խորհրդի անունից ստորագրում է փաստաթղթեր,

նիստերի միջեւ ընկած ժամանակահատվածում կազմակերպում է Հակամենաշնորհային խորհրդի աշխատանքները,

Հակամենաշնորհային խորհրդի համաձայնությամբ իրականացնում է նրա աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ այլ գործառույթներ:

Նախագահի բացակայության դեպքում նրա գործառույթներն իրականացնում է տեղակալներից մեկը:

Նախագահը եւ նրա տեղակալները պահպանում են Հակամենաշնորհային խորհրդում իրենց պետությունների լիազոր ներկայացուցիչների կարգավիճակը:

Հակամենաշնորհային խորհրդի կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով մտնում է ԱՊՀ Գործադիր կոմիտեի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը:

5. ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հակամենաշնորհային խորհրդի ընթացիկ աշխատանքը եւ նիստերի կազմակերպատեխնիկական նախապատրաստումն իրականացվում է Հակամենաշնորհային խորհրդի քարտուղարության կողմից, որի գործառույթներն իրականացնում է ԱՊՀ Գործադիր կոմիտեի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

6. ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հակամենաշնորհային խորհրդի նիստերի պարբերականությունը եւ նախապատրաստման ու անցկացման կարգը սահմանվում են նրա աշխատանքի կանոնակարգով: Հակամենաշնորհային խորհրդի արտահերթ նիստեր կարող են հրավիրվել նախագահի նախաձեռնությամբ կամ առնվազն երեք Կողմերի ներկայացուցիչների պահանջով:

Նիստերի մասնակիցների գործուղումների ծախսերը կրում է ուղարկող Կողմը:

Հակամենաշնորհային խորհրդի որոշումները իրավազոր են, եթե նիստին ներկա են Կողմերի ներկայացուցիչների երկու երրորդը:

Հակամենաշնորհային խորհուրդն ընդունում է՝

որոշումներ, որոնց կատարման պարտադիր լինելը հաստատվում է Կողմերի համապատասխան որոշումներով,

խորհրդատվական բնույթի որոշումներ:

Հակամենաշնորհային խորհրդի նիստերին նրա հրավերով որպես դիտորդներ կարող են ներկա գտնվել մասնակից պետությունների շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ արտասահմանյան եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հակամենաշնորհային խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների որակյալ մեծամասնությամբ (ներկա գտնվող եւ քվեարկությանը մասնակցող լիազոր ներկայացուցիչների երկու երրորդով):

Յուրաքանչյուր Կողմ կարող է հայտնել այս կամ այն հարցի կապակցությամբ իր շահագրգիռ չլինելու մասին, որը չպետք է դիտվի այլ շահագրգիռ Կողմերի կողմից որոշման ընդունման համար արգելք: Իրենց շահագրգիռ չլինելու մասին հայտարարած Կողմերի վրա ընդունված որոշումները չեն տարածվում:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հակամենաշնորհային խորհրդի աշխատանքային լեզուն ռուսերենն է:

Հակամենաշնորհային խորհրդի քարտուղարության գտնվելու վայրը Մոսկվա քաղաքն է:

Սույն Կարգի փոփոխություններն ու լրացումները ընդունվում են սահմանված կարգով:

* Պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2001 թվականի հունվարի 25-ից: